



ՀՈՐԻՈՐԻ ՏԱՐԻ

ԹԻԻ 130

17 ՅՈՒՆՈՒԱՐ 1914


ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ՏՕՂԱՑՈՅՑ

- Յունուար 18 † Կիր. զկ. Ա. Զկնի ութօրեից Յայնուքեան եւ Մկրտսուքեան:
- 19 Բշ. դձ. Ս. Պետրոսի Աղեփանդոս Հայրապետին եւ Ագիտողոմի սարկաւազին:
- 20 Գշ. զկ. Ս. Մեծին Թեոդոսի բազաւորին եւ Մանկանցն եփեսոսի:
- 21 Դշ. սձ. Պահոց
- 22 Եշ. սկ. Ս. Կիրակոսի եւ մօրն նորա Յուդիսայ: եւ Տրիփոնի վկային:
- 23 Ուր. քձ. Պահոց
- 24 Շք. քկ. Սրբոյն Աբանասայ եւ Կիւրղի Հայրապետաց: եւ Գրիգորի Աստուածաբանին: եւ Մարութայի եպիսկոպոսին:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԿԱՆ
ՇԱՐԲԱՌ-ԱՌ-ԵՐԹ

Զորրորդ տարի 17 Յունուար 1914 Թիւ 130

«Մրբազան Բանամայապեան Պիոս Ժ. կը մտադրէ որ Կաթողիկէ Աւստրալիացի Եպիսկոպոսները շատ
ունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մտաբանաց արդիւնաւորութեան համար
Մրբազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբեթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մէրի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թեղեանց, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուանամարաւ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

Բ.

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ԱԶՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ (*) (Շար.)

Այս անկումի վիճակը կը բացատրուի եւ
չօչափելի կ'ըլլայ երկու պատկերով, որոնց
մէկը հեթանոսէ մը, միւսը՝ Ս. Գրիգորէն քաղ-
ուած է: — Օրին մէկը սուտը չկարենալով
ճշմարտութեան հետ կենակցիլ՝ մտածեց զայն
տարագրել. ուստի ներկայացաւ անոր ու ը-
սաւ: — Բո'յր իմ, դուն այնչափ բարի ես,
եւ զգուշաւոր չարագործ մարդիկներէ, որ
սիրտս կը կսկծայ վրադ, այնքան մեծ կ'ըլ-
լայ քու վիշտդ անոնց դիմաց, իրաւ չէ:

(*) Տե՛ս Արձ. Գ. Տարի Թիւ 126 էջ 804.

Ուրեմն վերջ տուր ցաւոցդ, ծածկէ երեսդ
քօղով մը չտեսնուելու համար»: — Ըսաւ
և մէկզի կեցաւ նայելու: — Խորագէտ ան-
ցորդներ տեսան սուտին դէմքին խարէական
գծերը և մատնիչ ըսին անոր: — Բայց ճշ-
մարտութիւնը չանդրադարձաւ և քօղակեց
դէմքը: — Այս ըլլալէն վերջը սուտը տեսաւ
որ քօղի տակէն ալ ճշմարտութիւնը կը տես-
նուէր իր ցոլքերով: հետեւաբար սրատես
մարդիկ կը հետեւին անոր. այն ատեն կրկին
անոր մօտեցաւ սուտը և ըսաւ: — «Բո'յր իմ,
հետս եկո՛ւր, տեղ մը ունիմ, որ քեզ ար-
ժանի է, պալատ մըն է, արքունիք մը, ուր
քաղցրութիւնէ, մաքուր սէրէ և զուարճալի
տեսակցութիւններէ զատ ուրիշ բան չպիտի
ունենաս»: — Միամիտը դնաց սուտի ետե-
ւէն, որ քարայրի մը խորը համեմունն պէս
զանի հոն փակեց՝ կղզեկով վրան դուռը: —
Ասկէ վերջ բոլոր երկիրը իրեն հպատակ ըրաւ:

չատ անգամ ճշմարտին ձեռն առնելով :— Ժա-
մանակը , որ միոյն և միւսին հայրն էր , տես-
նելով որ ճշմարտութիւնը չէր երեւեր , տըր-
տընջալով , կոծելով ձերմակ մազերը ձեռադր
մէջ տռած , սկսաւ վայել ու լալ . յետոյ մու-
նետիկ մը հանեց մէջտեղ՝ մեծ պարգեւ մը
խոստանալով սնոր որ պիտի գտնէր ճշմար-
տութիւնը . և հարկ եղաւ որ ինքն ալ չորս
դին պատէր , իսկզարկէր . գտնելու համար
կորուսեալ գաւտիր : ինքզ ձերունին , պարտալ
տեղ կը յողմէի . չի կրնար գտնել :— Ահա այս
ստակով Լուկիանոս յոյն փիլիսոփայն Նիսորա-
դրեղ հեթանոս աշխարհի վիճակը ճշմարտու-
թեան հանդէպ և ո՛րքան ճշգրիտ են անոր
գծերը : Չէ՞ք տեսնե՞ս հոն ճշմարտութեան և
սուտի երկուսորեակներու անուանող ներքեւ
մարդկային ազգի երկու դասակարգի բաժա-
նումը՝ յորդիս Աստուծոյ եւ յորդիս մարդկան
նախաձեռնող անկումէն վերջ . չէ՞ք տեսնե՞ր
հոն թէ ինչպէս ճշմարտութեան դէմ սուտի
դաւաճանութիւնը կ'ախարհէ այն եղբայրաւ-
պան հեղեղն , զոր գաւեղ Կայէն , որդւոյ
մարդկան նախահայրը , Արեւի , որդւոյ Աս-
տուծոյ նախահօր դէմ , ուսկից սկսաւ Ար-
դարոյն և Մեծիկոյն պայքարը , որուն սպա-
ռումն եղաւ Գողգոթայի եղեան : « Կ'ըսէ Լու-
իւն իւր եղբորն , միտմիտ Արեւին , եկո՛ւ ,
դաճո ասոյն երանիք . եւ դաճո հասնե-
նուն պէս իր յարձակի եղբորն մեայ եւ կո
տղտնէ զայն » : Արեւին արեւնն բարձրագոյ
կը խօսի առ Աստուած . Աթէ կը յաջորդէ
անոր՝ արդարեղ սերունդը Վարդանալիւ
համար : Այլ աւա՛ղ որդիք Աստուծոյ ալ կը
խառնակին որդւոյ մարդկան , ուսկից ճշաւ
ամէն բարոյական անկարգութիւն « վասն
յինելոյ դոգա մարմին » . մեաւոր անկարգու-
թիւն « ամենայն ո՞ք հորհե՞ր և որք իմաստով և
յարիս » (Ծնն . 9) . կրօնական անկարգութիւն
« գի ոնդունայն էին ամենայն մարդիկ բնու-
թեամբ յորն եւ աստուածագիտութիւն . եւ յե-
րեւելի բարութեանցն ո՛չ կարագին գիտի որ
եւն , եւ ո՛չ ի գործս հայեցեալ ծանեան
գիտարարուեցն . ալ կամ գիտը կամ գիտի ,
կամ գող երագ , կամ գասեղաց , շրջան ,
կամ՝ զորոց բնութիւնս , կամ զըստաւորս

երկնաւորս՝ զարբանեալ տախարհի աս-
տուածս համարեցան » (Իմաստ . Գ . 1—2) :
Հեթանոս մարդկութեան վիճակն է այս ,
անկումի վիճակ՝ կռապաշտութեան պիղծ ու
գարշելի դարերուն , որ ատեն յուսահատ Ժա-
մանակը պարտալ տեղ մունետիկ հանեց իր
փիլիսոփաները փնտռելու և գտնելու համար
կորուսեալ ճշմարտութիւնը . անոնք , տեսանք
արդէն , կամ վհատեցան իրենց իսկզարկու-
թեան մէջ կամ սուտէն կաշառուած կամ
խարուած ա՛լ աւելի ծածկեցին ճշմարտու-
թիւնն և անոր ճամբաներն :

Սուտի ճշմարտութեան դէմ եղեռական
պայքարն ամփոփուած է Ս . Գրոյ անցուղար-
ձերու մէջ , որոնք Մեսիայի , աստուածային
Մեծ Արդարոյն պալուստը կը պատրաստէին
Արդարներու յաջորդութեամբ , որոնք նոյն
մարդարեակն անցուղարձերու հերոսներն
էին : Իմաստունը մէկ նայուածքով տեսած
էր աստուածաշունչ Տոմին մէջ Սմայարչաի
Արդարոյն դէմ ունեցած այս հակառակամար-
տութիւնը (Antagonisme) և զայն պատմե-
լով սուտի ճշմարտութեան դէմ հեթանոս
դարերու դաւաճանութիւն կը պատկերացնէ ,
ախարհելով միանգամայն մարգարէարար
Անոր , որուն արիւնն Արեւի արիւնէն աւելի
բարձր կը գոչէ և որ նեմարսութիւնն ինքն
էր : Կ'արժէ մէջ բերել այդ վսեմ հաստուածը
և բացատրութեան պէտք չի մնար . « Դարա-
նակալ ըլլանք Արդարին , վասն զի մեզ դժպի-
եղած է եւ հակառակ կը կենայ մեր գոր-
ծոց . եւ օրինաց դէմ յանցանք մեզ նախա-
քին կը սեպէ . եւ մեր մանկութեան մեղքերը
կը հրատարակէ : կ'ապանովէ քէ ինքը Աս-
տուծոյ գիտութիւնն ունի եւ իւր անձը Աս-
տուծոյ Որդի կ'անուանէ : Այսպէս մեր գա-
ղափարներն կը ձաղկէ , կը յանդիմանէ .
ծանր է մեզ նոյն իսկ իր ներկայութիւնը .
վասն զի անոր կենցաղը ուրիշներու չի նը-
մանիր եւ անոր համբաները բոլորովին այ-
լազգի են : Անոր զարեւի երեւցած ենք եւ
մեր համբաներն կը խորի իբրեւ պղծու-
թիւններէ , երանութիւն կուսայ Արդարներու
վախճանին , եւ հպարտացած ինքնիրեն Հայր
կ'անուանէ զԱստուած : Տեսնենք քէ նեմարի՛ս

են անոր խօսքերն եւ փորձենք անգամ մը
թէ ի՞նչ վերջ պիտի ունենայ. եթէ իրօք Աս-
տուծոյ որդի է՝ անուշտ պիտի պատկանէ
զանիկայ Աստուած եւ իւր հակառակորդնե-
րու ձեռքէն պիտի փրկէ: Խոսքս անգեղէն ուրեմն
զանիկայ թեմամբնով եւ ծեծով, եւ տես-
նենք թէ պիտի ունենայ (Աստուծոյ) այցելու-
քիւնը, վասն զի անոր համբերատարութիւնը
հասցնելու չափ (պիտի հետապնդենք) եւ պի-
տի օգտուի անոր անօրհակալութենէն: Խայ-
տառակ մանուկ մը զայն պիտի դատենք եւ
տեսնենք թէ ի՞ր ըսածին համաձայն պիտի ու-
նենայ (Աստուծոյ) օգնութիւնը: Այս խորհե-
ցան ու խաբուեցան, վասնզի կուրացուց
զիրենք իրենց չարութիւնը» (Իմաստ. Բ.):
Եւ իրօք Աստուած որ զմարդը ճշմարտու-
թեան ժառանգորդ տեսնէ՝ չէր «Վերա-
կանգնելով պանեց ու վրկեց իւր յանցան-
քէն աշխարհի նախաստեղծ հայրը. եւ զօրու-
քիւն տուաւ անոր սիրանալու ամեն բանի»
եւ որքան ալ «անկից խոսորելով բաժնուե-
ցաւ անխաւը (Կայէն եւ իւր սիրունորը) ու
կուրուեցաւ իւր բարկութեամբ եղբայրաւ-
պան սրտախնդրեանց մեջ», սակայն «խնու-
տութիւնը» այն տուալին անգամ «ջրհեղեղէ
ջնջուած երկիրը կրկին վրկեց Արդարին
չնչին փայտովը նաւապետելով» (Իմաստ. Գ.
Ժ.) եւ յետոյ ի յրումն ժամանակաց ապա-
կանած երկիրը վերանորոգեց ուրիշ չնչին
փայտի մը, խաչով, ուր ցաւոց եւ դառնու-
թեանց ովկէանի մը մէջ Արդարներու անդրա-
նիկն կը խայտառակէր հրէից գայթակղու-
թիւնը եւ հեթանոսաց իմաստութիւնը:

Այս առաջին պատկերն է, տեսնենք երկ-
րորդը որ աւելի ներկայ դարուս, հիթանու-
տութեան վերակոչումին կը պատշաճի: Մար-
դիկ գրուելու վրայ են ջրհեղեղէն վերջ. գաշտ
մը կու գան եւ հպարտ գաղափարը կ'ունենան
իրարմէ չրաժանուած՝ աշտարակ մը շինելու,
«որուն գլուխը հասնի մինչեւ երկինք եւ այս-
պէս հռչակենք, կ'ըսեն, անուենիս երկրիս
երեսին վրայ սփռուելէ առաջ» (Ծնն. Ժ.Ա.):
Աստուած իայցիպա ու չհաւնեցաւ յանդուգն
ամբարտաւանութեան. «Ահա ամենք մեկ
ազգ եւ մեկ լեզու ունենալուն համար սկը-

սան այդ բնել արդ ուզածնին բնելու բան
մը չպակսիր. եկե՛ք իջնե՛նք եւ խառնակենք
հոն անոնց լեզուները, որպէս զի բնկեր բն-
կերի խօսք չհասկնայ», ահաւոր պատիժ
ինքնապատան յաւակնութեան, որ ճշմար-
տութենէ անկախօրէն իւր զարգացումի աշ-
տարակը շինելու կը ձեռնարկէ. «Եւ Տէր Աս-
տուած ցրուեց զանոնք բնդ երեսս ամենայն
երկրի եւ քաղաք ու աշտարակ կիսաչէն մնա-
ցին. անոր համար տեղոյն անունը խառ-
նակութիւն կոչուեցաւ, վասն զի հոն խառ-
նակեց Տէր Աստուած ամեն երկրի լեզուները»
(Ծնն. .): Ահա ինչպէս կը գործէ Աստուած ու
կը խայտառակէ անձնապատան մարդը. սա
հիմա ալ իր խելքին հաւնած մինչեւ երկինք
կլիկ կ'ուզէ ինքնիշխան եւ ինքնագլուխ.
Աստուած ալ կը խոնարհեցնէ զայն շփոթե-
լով գաղափարին եւ թոյլ տալով որ հակա-
ռական կարծիքներու մանուածին մէջ խելա-
պարի: Բայց հոս է Անոր նախախնամ իմաս-
տութիւնը, որ նոյն իսկ այդ շփոթութեանց
մէջէն երեւան կը հանէ ճշմարտութիւնը. վասն
զի «նոյնիսկ շփոթած ազգերու միաբան չա-
րութեան մեջէն նանչցաւ զարդարը եւ անա-
րատ պահեց... զերծ մոլորութենէ եւ որդւոյն
(Արդարոյն) վրայ ունեցած զուրկն երեսն
պահեց հզօրը» (Իմաստ. Ժ. 5):

(Շարունակելի)

ԵԱԶԸԳ ԶՕՃՈՒԳԼԱՐԸՄԸԶԱ

Հանրի՝ աղուշը նազ ու նիւվազիչտէ պէօ-
յիւմիւշ պիր թանէճիգ էվլատ խաի:

Զօճուգ օն եաչընա կիրինճէ, բէտէր վէ
վալիտէսի օնուն հազգընտա մըհիմմ պիր
գարար իթթիխազընա մէճպուր օլտուլար:
Օնը սէրպէսթ պիր մէքթէպէ մի, հօգսա լիսէյէ
մի գօմայր, աշխարհականլարա մը, հօգսա
րուհպանա մը թէսլիմ իթմէլի օլտուղընը ու-
զուն ուզատըյա տիւշիւնտիւլէր:

Մատամ՝ րուհպանը արզու խտէրտի, է-
ֆէնտի իսէ աշխարհական թարաֆտարը խտի:
Մամաֆիյհ, էֆէնտի նէ մէմուր վէ նէ տէ
ֆրանմասօն խտի. մունթազամէն Պատարա-

գա կիտէր վէ ճուսմա կիւնդէրի տախի բէր-
հիզինի թուլարտը :

Պագաթ ծնը պու թարաֆա մէյլ իթտի-
րէն սէպէպլէր քէնտինճէ բէք մագուլ իտի-
լէր . հանի ,

— Աճէպա պիր կէնճի քէնտի զէմանը-
նըն էֆքեարր տալիրէսինտէ թէրպիյէ իթմէք
իճապ իթմէք մի Գաթօլիք Քիլիսասը
արթըք էսկիմիյ տիր . բարազլար իսէ , թա-
պիի բէք կէրիտէ տիրլէր Օղլում էյէր
իսթիզպալտա պիր մէվգի իհրազ իթմէք իս-
թէրսէ , պիր յիսհտէն մէզունն ումագ քէնտի-
սի իչիւն բէք իսայրըր ումագ տըր Հէմ
տէ բարազլար չոճուզլարըր բարազլորդա տա-
վէթ իտէրլէր , տէնիլիյոր , եա կիւնիւն պի-
րինտէ պիզիմքինի տէ ֆիքրինի չէվիրէճէք
օլուրլարսա . . .

Նէթիճէտէ , մատամ էֆէնտինին իսրարը-
նը գապուլ իթմէյէ մէճպուր օլտու . չիւնքի
պիր օթօմպիլ ֆէնէրինին զուլմէթի լէյլի
թէնվիր իթտիյի կիպի , զոճասընըն պէյան
իթտիյի պու ֆիքրլէր արթըք մատամըն
ֆիքրինի թէնվիր իթմիչլէրտի :

Շու հալտէ քիւչիւք՝ յիսէյէ կիթմէյէ պաշ-
լատը :

*
* *

Պիր միւտտէթ բէտէր վէ վալիտէ հայ-
րէթտէ գալըյոր վէ քէմալը մէմուռնիյէթլէ
էվլատլարընըն թէրագըրընը կէօրիւյօրլարտը :

Էսասէն ահմագ պիր չոճուզ օլմայան Հան-
րի , տաիմա մէքթէպտէն պիրինճիլիյի գա-
զանարագ ավտէթ իտիյօրտը :

Բէտէր ատէթա հայրան օլույօրտը :

— Մարի , կէօրիւյօրմընըն , չոճուզըն
մուալլիմլէրի նէ՝ գատար միւզթէտիր տիր-
լէր : Չաթէն հէրսի տէ տար իւլ մուալլիմտէն
նէչէթ իթմիչլէրլէր : Չոճուզլարըն զիհնլէրի-
նի տօլտուրմայը պիլիյօրլար . . .

Վալիտէնին տէ հէր վապրթ իչուն ճէվապը ,

— Հագիգաթէն պու խուսուստաքի գա-
րար ու ֆիքրին շայանը թագտիր տիր , տէ-
մէք իտի :

Պագաթ չոճուզըն սընֆը եիւքսէլտի իւլէ ,
պէլաղէթ , ֆէլսէֆէ զէմանլարընտա բիւզ-
կեար պիւսպիւթիւն տէյիչտի :

Հանրինին սէօղլէրինտէ զաթէն ֆէնալըգ
հիսս օլունմայա պաշլամըշտը : Պունուն պէօյ-
լէ օլտուղունա շաշմամալը . չիւնքի զէվալը
չոճուզըն գուլագլարը օ նագարաթտան պաշ-
գա պիր չէյ իչիթմէյօրլարտը : Յիլ հագիգա ,
մէքթէպտէ պազը միւհթէրէմ , քեամիլ վէ
հաթթա տրինտար պիլէ օլան մուալլիմլէր տէ
վար իտի , ֆագաթ պունլարըն սէսի ումու-
մըն գարկաշալըլը արասընտա զայիպ օլու-
յօրտը :

Ջէվալը չոճուզ նիչէ նիչէ տէֆալար ի-
չիթմիչտի քի մէզէպ թէրագըրընը խամի
տիր . քէօթէպէքին ըլըգտան գաշտըլը կի-
պի Քիլիսա տա հագըգաթտան գաշար . իս-
թիզպալըն եէկեանէ մէզէպի իլմ օլանագ տըր :

Էտէպիյաթ տէրսլէրինտէ չօգ տէֆա ծնա
թէքրար իտիլմիչտի քի , գատիմ սանաաթըն
էն նէֆիս ասարը բութրէրէսթիւգ սէմէրէսի
տիր . սանաաթըն ճէտիտէնին պու գատար սօլ-
ղուն օլմասը՝ գաթօլիք մէզէպիլին թէնսիրի
ալթընտա պօղուլմասը նէթիճէսի տիր :

Թարիս խուսուսընտա պէօյլէ . արգատաշ-
լարը հէր ֆըրսաթտան պիլ իսթիֆատէ , է-
թիէն Տօլէ , Թօրգուէմատա , էնքիզիսիճն ,
կալիլէ , Սէն Պարթէլըմի վագաալարընը ի-
լէրի սիւրէրլէր . քէյֆլէրինէ կէօրէ մանալար
վէրիլլէր . . . արա սըրա տա ժան տ'Արքը վէ
Լօյօլայը իսթիհայա պիլէ գալըլըլար իտի :

Իչթէ պու սուրէթլէ Հանրի սուպահտան
ագշամա գատար մէզէպէ գարը զարագ ու
ատաթէթինի արթըրաճագ քիւֆրլէր տույար ,
ատէթա ծնալարա տօյար իտի :

*
* *

Յէլսէֆէ տէրսինտէ տէրէճէ աշտը թաշտը :
Մուալլիմ եալընըգ քէնտինտէն պաշգա
հիչ պիր չէյէ ինանմայօրտը . . .

Օ՝ թալէպէսինէ էօյրէտիրտի քի , ֆայի-
տէլի օլան հէր չէյ էյի տիր . էյիլիք տէմէք
մէնֆաաթալլէր օլմագ տէմէք տիր . ֆէնալըգ
իսէ մէնֆաաթալլէր , ֆայիտէսիլ օլան տըր . . .
Իչթէ պու կիւն աւխարհականլար մէքթէպ-
լէրինտէ քիւրսիի թալիմտէն շակիրտանա
էօյրէտիլէն հէմ տէ բէսմէն էօյրէտիլէն թա-
լիմաթ պու տըր : Պու թալիմաթա տա մեհ-
ճաաթալլէրիֆ նամը վէրիլլէր :

Պիր կիւն հէր նասըլսա մուալլիմ, սընըֆ-տա Ալլահտան պահս էլիմէյէ լիւզում կէօրիւր :

Ալլահն վարըղընը իսպաթ էյլէյէն սէ-պէպլէրի դայէթ կէվէթ պիր սուրէթտէ թա-լէպէյէ արզ էյլէր : Պուռնտան սօնրա տա , Ալ-լահն վար օլմատըղընը իսպաթ էյլէյէն վէ քէնտի իճատքէրտէսի օլան տէլիլլէրի տէ օն-լարըն էօնիւնէ գօր. վէ ճիտտի պիր վաղիյէթ ալարազ շու եօլտա իտարէյի քէլամ էյլէր :

«Տէմէթ տիր քի տիւնեանըն ինթիզամըն-տան վէ սայիթէտէն իսթիխրաճ իտիլէն սէ-պէպլէր պիլէ , Ալլահն վարըղընը թաստիդ իտէմէզլէր . . . օլսա օլսա առատ ու ախլաք-տաքի ինթիզամ սէպէպլէրի պիլի - օնա գա-տար հիւքսէլթէ պիլիլլէր . . . Ծագաթ պու խուսուստաքի սէպէպլէր իսէ զաթէն Ալլա-հն վարըղընը գապուլ էյլէյէնլէրին հիսսի-յաթը նէթիճէսի տիր : Շու հալտէ Ալլահն վարըղընը իսպաթ էյլէյէն տէլիլլէր գատար տա օնուռն վար օլմատըղընը իսպաթ էյլէյէն տէլիլլէր վար տըր տէմէթ տիր . . . չէօյլէ քի պու իքի թարաֆտան պիրիլնէ թէմալիլ իթ-մէթ . հէր պիր ֆէրտին հիսսիյաթը խուսու-սիլէսինէ միւթէվագըֆ պիր մէսէլէ տիր . . . »

Պիր ֆիտան գըրըլպ չամուրա տա տիւշ-տիւքտէն սօնրա , արթըզ օնուռն տիւզէլմէ-սինի պէլէմէթ գապիլսիդ տիր . . . տէօրթ սէնէտէն պէրի , մէզնէպէ գարըն էն միւտհիշ ֆիքրիլէրլէ մէշպու օլան Հանրինին բուհը արթըզ տիւզէլմէյէնէթ , քէնտի քէնտիսինի պուլամայաճագ պիր տէրէճէտէ խարապ օլ-մուշտը . . . օ արթըզ գանաաթը քեսմիլլէ իլէ պիր տինսիդ , պիր Ալլահըզ օլմուշտը . . .

ԿՈՍՏԱՆԴԻՆԵԱՆ ՅՈՐԵԼԵԱՆԸ ՅԱՄԱՍԻԱ

Կաթողիկէ աշխարհը դըրդող Կոստանդինեան յու-բէլինին, Ամասիան ալ, թէպէտ փոքրաթիւ հաս-րակութեամբ, սակայն ունեցաւ իր բաժինը. բաժին մը ոչ նուազ փառաւոր՝ համեմատութեամբ իր ու-ժերուն : Ասիկայ անշուշտ կը պարտի հայասէր և ե-ռանդուն Յիսուսեան Հոյրերուն, որոնք ամէն ճիգ կը թափեն այդ կարեւոր առաքելութիւնը ծաղկեցնելու և ծաղկեցնելու զայն՝ հայ արարողութեան և հայ նուիրապետութեան իրեն ռօմիոգաները Ամէն գիւ-րուլիւն ընծայած են անոնք որ իրենց եկեղեցւոյն մէջ հայ ծիսակատարութիւնները ըլլան անխափան :

Իրենց բարձրագոյն դպրոցի աշակերտներէն և դաս-տուներէն դպրաց դաս մը կազմուած է և նոյն իսկ երաժշտապետի ամաթոշակը իրենք կը վճարեն : Որ-քան բարի օրինակ պէտք է ըլլայ այս ընթացքը շա-տեբու, և որքան նաև ցոյտուն հերքում մը՝ այն թշնամի վրպարտութեանց թէ՛ Հռովմայ ծրարիրը ըլ-լայ լատինացիները կմեզ և հայ ծէսը և հնաւանդ սո-վորութիւնները խափանել :

Գեկտ. Կի հինգշաբթի իրիկունը սկսան հանգէս-ները, շքեղ եռօրեայիւ, ամէն երեկոյ երկուեռ բազ-մութեամբ կը լեցուէր եկեղեցին : Առաջին բացման երեկոյ քարոզեց Գեր. Յովսէփ Վ. Յօղունի, որ հո-գեւոր կրթութեանց պատճառաւ կը գտնուէր յԱ-մասիա. խօսեցաւ կոստանդինեան տօներու վրայ, քրիս-տոնէից նախկին հալածանաց, և այդ հալածանաց մէջ Անտոնիոսեան քարոզուած խաչի կրօնքին կանգուն մնա-լուն հրաշքներուն վրայ : Միշտ քարոզէ առաջ և վերջը երգէր խումբը, նուագախումբին ընկերակցու-թեամբ, կ'երգէր ընտիր երգեր. և կը վերջնաւոր եւօր-եայն հոնդիսաւոր օրհնութեամբ Ամենատուրք խոր-հրդոյն : Երկրորդ և երրորդ իրիկունները քարոզեց Գեր. Յովսէփ Վ. Պաթմուշի խօսեցաւ առաջին անգամ մեղաց վրայ. թէ ինչպէս առաջին մեղքով մարդկա-յին բնութիւնը շնորհաց վիճակէն մերկացաւ : Երկ-րորդ անգամ ցոյց տուաւ թէ ինչպէս վերսկանգնե-ցաւ այդ բնութիւնը Աստուածածնայ Անարատ Յղու-թեամբը. նոր անարատ կ'սա մը ըլլալով նաև երջան-կութեան դրոստին բացման արշալոյսը : Գեկտ. 7 կի-րակի հանդիսութեանց վերջին օրը, հանդիսաւոր պա-տարագ մատուցանելով Գեր. Յովսէփ Վ. Յօղունի, վերջին քարոզը խօսեցաւ թէ՛ ինչպէս մեղքով ան-կեալ մարդուն անէծքը չնջեց Քրիստոս՝ արեգակն ար-դարութեան՝ իր Մարգեղութեան խորհրդով, և անոր վարդապետութեան գործադրութեամբ միայն ամէն հոգեցիկ կրնայ կատարելալ լուծում գտնել : — Նոյն օրը կէսօրէ վերջ, ընդարձակ թատերասրահին մէջ մո-գական լապտերով կը ցուցադրուէին, Լուրտ Աստ-ուածածնայ երեւման պատմութիւնը և դիւաւոր հը-րաշքները : Յետոյ անմիջապէս կազմուելով շքեղ թա-փօր մը եկեղեցիէն դէպի աւագ դրան առջեւ տա-րածուած ընդարձակ բալը, ուր վետերուած էր մար-մարեայ բարձր ու շքեղ պատուանդանը վրայ Լուրտ Աստուածածնայ երկաթեայ արձանը, որ պիտի օր-նուէր այս առթիւ : Բակը շքեղօրէն պարզարուած էր գոյնզգոյն դրօշակներով, կանանչ դրոսանգնեղով : Ար-ձանին շուրջը հարեւրէ աւելի փոքրիկ աղջիկներ գը-լուներին վարդէ պսակներով, կ'երգէին Աստուածած-նայ երգը. հանդիսաւոր թափօրը արձանին առջեւ հասնելով, օրհնութեան արարողութիւնը սկսաւ, զոր կատարեց Վեր. Բէն տը Գօնթանիէ, Մարգարանի Յիսուսեանց մեծաւորը : Երբ բացուեցաւ արձանը, ֆանֆառի փողերը երբե անգամ արքայական բարեւ տուին Ս. Աստուածածնայ. բոլոր բազմութիւնը, եր-

գեց Ողջոյն, ողջոյն, ողջոյն քեզ Մարիամ: Եւ փոք-
րիկ աղջկանք երգելով կը նուիրէին իրենց զխուան
պատկները Անարատ Մօր, դնելով անոր սակց տաջեւ
ձերմակ պատկները: Նոյն գիշեր ելեքսորական լոյսերով
լուսավառւած էր արձանը և կայսուուն Փանֆաուր
կը Տնչիցնէր մերթ ընդ մերթ անուշ կտորներ:

Ա. Կանապետ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԸ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

(Շար.)

5. Ի զո՛ւր ուրեմն Մկրտիչը, տեսնելով
որ Աստուածորդին վերջին ծայր խոնարհու-
թեամբ մեղաւոր մարդէ մը Մկրտութիւնը
կ'ուզէ, ի զո՛ւր, կ'ըսեմ, Մկրտիչը զարմա-
ցած, զարհուրած, շուարած և ինքնիրմէն
դուրս ելածի պէս՝ կ'ազաղակէ. «Ամենեկին
չըլլայ թէ ես մեղաւորս զքեզ մկրտեմ,
մանաւանդ ես պարտական եմ քեզմէ մկր-
տուելու և մաքրուելու (Մատթ. 14): Թոյլ
տու՛ւր, կը պատասխանէ Տէրը. պէտք է որ
որ դուն հիմա կատարես ինչ որ քեզի կ'ը-
սեմ. կը վայէ որ երկուքս ալ այս կերպով
ամէն արդարութիւն կատարենք (Անդ 15):
Եւ ըսել ուզեց. Այո՛, դուն ալ պիտի ըն-
դունիր հոգեւոր Մկրտութիւնս, որ քեզի
համար արեան Մկրտութեան անհաւաստեայն
պիտի ըլլայ, զոր իմ օրէնքիս սրբութենէն
պիտի ընդունիր իբրեւ իմ Կարապետս՝ իմ
անուանս փառացն համար: Հիմա պէտք է որ
ես քեզմէ քու ապաշխարութեան մկրտու-
թիւնդ ընդունիմ իբրեւ ներկայացուցիչ և
զո՛հ մեղապարտ մարդկութեան. «Թոյլ տուր
այժմ»: Իբրեւ սպասաւորս պէտք է հնա-
զանդիս մընչեւ իսկ քու Տէրդ մկրտելու հա-
մար, և ես պէտք է խոնարհիմ իբրեւ փրկիչ՝
մինչեւ նոյն իսկ իմ ծառայէս մկրտութիւն
ընդունելու այս նուաստացուցիչ արարողու-
թեան: Մինչեւ այս վերջին աստիճանին
հասնելու ենք, դուն քու հպատակութիւնդ
և ես իմ հաճութիւնս ու զիջողութիւնս:
Այսպէս երկուքս ալ կը կատարենք մեր յա-
տուկ տառքելութիւնները. ամէն տեսակ ար-
դարութիւն և առաքելութիւն պիտի գոր-

ծենք. քանզի, ամէն մէկուն Աստուծմէ ըն-
դունած պաշտօնը կատարելուն մէջ կը կա-
յանայ ամէն առաքելութիւն, և ծառայողին
հնազանդութենէն ու հրամայողին խոնարհու-
թենէն կը ծագի արդարութիւնն ու կարգը.
«Այսպէս վայել է մեզ ընդդէմ զամենայն ար-
դարութիւն»:

Ո՛վ զարմանալի տեսարան ուրեմն՝ սքան-
չելի խոնարհութեան և զիջողութեան Յիսու-
սի Քրիստոսի: Կը ծնրադրէ նա Յովհաննու
առջեւ, Տէրը՝ ծառային, Զօրավարը՝ զինուո-
րին, Դատաւորը՝ յանցապարտին, Մեսիան՝
Կարապետին, Բանն՝ խայնին, Ստեղծողը՝
ստեղծուածին, Աստուածորդին՝ մարդու որդե-
ւոյն առջեւ, ձեռքերը կուրծքին վրայ խա-
չածեւ, գլուխը ծռած, ճակատը խոնարհեցու-
ցած, աչքերը դէպի գետին նայելով, ամէկուս
դէմքով, աղօթքը բերանը և զղջացած սրբ-
տով, յանցաւորի և մեղաւորի կերպարանքով
կ'ընդունի Յովհաննէսին ձեռքէն քառութեան
և ապաշխարութեան լուացումը. «Եւ մկր-
տեցաւ ի Յովհաննէս» (Մարկ. 9):

6. Սակայն ո՛վ զարմանաւքանչ անաե-
տութիւն խորհրդոց մեր փրկչին: Մինչդեռ
նա ինքզինքը կը նսեմացնէ և կը պահուրտի,
ընդհակառակը և ամենուրեք երեւան կ'ելլէ
ու կը յայտնուի. մինչդեռ կը խոնարհի, բո-
լոր իւր մեծվայելչութեամբ կ'երեւայ. մինչ-
դեռ մարդոց զաւակներուն ամենայնտիւնը ե-
րեւալու վիճակին կը զիջանի, եղական փառք
մը, իրեն ամենայատուկ շքեղութիւն զայն
կը չըջապատէ, և Աստուծոյ ճշմարիտ որդին
կը հռչակէ: Այսպէս երեւցաւ նա ծնած պա-
հուն, այսպէս մահուան ատեն, և նոյնպէս
կ'երեւի նաև այսօր մկրտուած միջոցին:
Վասն զի, հազիւ թէ անիկայ կ'ընդունի իր
մարմնոյն վրայ՝ պատկերացուցիչ և մարգա-
րէական ջուրը, հազիւ թէ կ'արտասանէ իր
սովորական ամենակարող աղօթքն իր բեր-
նովը, մանաւանդ թէ սրտովը (Գուկ. 21),
սահաւասիկ, ո՛վ տեսարան, ո՛վ հրաշք, տե-
սանելի կերպով երկինքը կը բացուի, այսինքն
օդին վերնագաւառին մէջ ընդարձակ ճեղ-
քուած՝ բացուած միջոց մը կը ձեւանայ, խո-
րունկ խորշ մը լայնածաւալ լուսով ողող-

ուած . և ճառագայթներու հոսանք մը կ'իջնէ փրկչին գլխուն վրայ . «Եւ ահա բացան նմա երկինք» (Մատթ . 16) . իբրեւ թէ ցոյց տալու համար , կ'ըսէ Մեկնիչը , որ՝ այս ամենուն տեսանելի մեծ հրաշքը կը պատահէր՝ ո՛չ թէ Յովհաննու Մկրտութեան զօրութիւնովը , հապա՝ խոնարհութեան արդիւնքովն , աղօթքին ազդեցութեամբն , Յիսուսի Քրիստոսի անձին ներկայութեամբը , որուն արժանապատուութիւնը Յովհաննէսի պատւէն անհուն կերպով աւելի մեծ էր (Աւարիտ .) : Եւ Սուրբ Մաքսիմոս կ'աւելցնէ թէ երկինքի այս բացուածքն շուրջը Հրեշտակներու հոծ բազմութիւնով մը լեցուեցաւ , կարծես թէ Տիրոջ խորին խոնարհութեան վրայ զարմանալու և մարդէն մկրտուած Աստուծոյ Որդին պաշտելու համար . ինչու որ , գրուած է թէ՝ Հրեշտակները միշտ կ'ըզձան դիտելու Յիսուսի Քրիստոսի ամենասուրբ կերպարանքը և անով զմայլելու (Յղպս . Մկրտ . Քսի .) :

Միեւնոյն ատեն և միեւնոյն երկնքի լուսալիցուղ բացուածքէն ահա ձայն մը որ կը հնչէ , ամենուն հասկնալի , բայց , աներեւոյթ անձի մը . բարձրագոյ , վեհաշունչ , փառաւոր , աստուածային ձայն , որ կ'ըսէ . «Այն որ կը տեսնէք հոս մարդու և մեղաւորի խոնարհ և նուաստ կերպարանքով , իմ Որդիս է , իմ յաւիտեանական հաճոյքներու առարկան է» : «Եւ ահա ձայն յերկնից որ տսէ , Դա է Որդի իմ սիրելի , ընդ որ հաճեցայ» (Մատթ . 17) . և նոյն Որդւոյն կը կրկնէ . այո՛ , ասուգիւ դուն իմ սիրելի որդիս ես , որուն ես մասնաւոր կերպով հաճեցայ : Իբրեւ թէ բոսած ըլլար անոր , որովհետեւ դուն իմ փառացս ցոյացումն և իմ գոյութեանս պատկերն ես , մասնաւոր կերպով և ամէն բանի մէջ ինձ հաճելի ես . զքեզ վերջին ծայր և միմիայն՝ կը սիրեմ , ի քեզ կը հանգչիմ , քեզմով կը զուարճանամ և կը յագեցնամ ու կը հրճուիմ : Մարդիկն ալ ինձ հաճելի պիտի ըլլան , ես զանոնք պիտի սիրեմ , բայց այն պայմանաւ որ անոնք քեզ հետեւին և քեզի աշակերտ ըլլան , քեզմէ սիրուին ու քու շնորհքներովդ լեցուին , քեզի հետ մէկ մարմին կազմեն և մէկ որդի

ըլլան . այնպէս որ զանոնք սիրելով՝ սիրած պիտի ըլլամ զանոնք՝ քեզմով , և զքեզ անոնցմով :

Ի՞նչ . աւելին կ'ուզես արդեօք . ահա նոյն երկնքի ճեղքուածքէն , նոյն փառքէն , ուրկէ այս խորհրդաւոր ձայնը լսուեցաւ , կը տեսնուի Հոգւոյն Սրբոյ իջնելն Յիսուսի Քրիստոսի վրայ մարմնաւոր ճերմակ Աղաւնիի կերպարանքով . և անոր աստուածային գլխուն վրայ կը հանգչի . որպէս զի յայտնի երեւայ կ'ըսեն մեկնիչները , թէ՝ աստուածային ձայնին վկայութիւնը Յովհաննէսին ուղղուած չէր , ալ Յիսուսի Քրիստոսի (Աւարիտէ) :

Սակայն այս աղանձին , որ անոր գլխուն վրայ կը հանգչի , կը ցուցնէ նաեւ երեւելի կերպով մը խորհուրդը՝ որ աներեւոյթ կերպով մը արդէն կատարուած էր Յաւիտեանական Բանին Սուրբ Կոյս Մարիամայ ամենամաքուր արգանդին մէջ մարմին առած վայրկեանին , այսինքն , այն ատեն Հոգին Սուրբ հանգչեցաւ Յիսուսի Քրիստոսի Սուրբ մարդկութեան մէջ՝ զոր՝ ինքը կազմած էր , և Ս . Պօղոսի՝ Դաւիթին յիշելով հաստատածին համաձայն (Եբր . 1) , զայն բոլոր հոգեւոր և աստուածեղէն շնորհաց երկնային օծութեամբ ճոխացուց : Արդ՝ Յիսուսի Քրիստոսի վրայ արդէն ծածկաբար կատարուած այս օծութիւնը՝ այսօր Հոգին Սուրբ բացորոշ կերպով կը յայտնէ : Անով՝ Մարդացեալ Բանը հրապարակական կերպով մը աշխարհի փրկութեան պաշտօնական ձեւը կ'զգենու , և կ'սկսի իր հրապարակական կեանքը , իր դարմանիչ գործքը և փրկչի բարձր պաշտօնի գործառնութիւնը , որուն վաւերական տիտղոսներն ու աստուածային յատկանիշը հանդիսապէս ստացաւ երկինքէն :

Դ . Ուրեմն Յիսուս Քրիստոս , ծնած աշխարհի վրայ ըստ մարմնոյ , վերստին կը ծնանաի այսօր անճառելի կերպով մը ըստ հոգւոյ , մարդոց մտքին ու սրտին մէջ , որոնք այս վայրկեանէն զինքը ոչ ոքի կը սորվին : Այնպէս որ ընդունած Մկրտութիւնը , կ'ըսէ Ս . Օգոստինոս , անոր համար նոր ծնունդի մը պէս է (Ճառ 36 զժաման .) : Որովհետեւ

նոյն իսկ Հոգին Սուրբ որ ներկայ գտնուեցաւ Մարիամայ արգանդին մէջ անոր մարմին առած ատեն, այսօր գետը լուացուած ատեն իր փայլմունքով զայն կը շրջապատէ, և լուացուած ջուրը կը սրբագործէ, ինչպէս արդէն մաքրեց և սրբեց Մայրը որ զայն յըզացաւ (Անդ)։ Նոյն իսկ Երկնաւոր Հայրը, որ ան ատեն իր Զօրութեամբը ամպի մը մէջ պարուրուածի պէս եղաւ, այսօր կ'աղաղակէ և իր Զայնով կը հուշակուի, և այն ատեն որ խորհրդաւոր շուքի մը պէս ծածկեց անոր ծնունդը, այսօր հրապարակաւ վկայութիւն կ'ընէ ճշմարտութեան (Անդ)։

Արդարեւ Մարմնացեալ Բանին Աստուծոյ այս խորհրդաւոր երկրորդ ծնունդն առաջինէն աւելի փառաւոր է. քանզի Յիսուսի Քրիստոսի առաջին ծնունդը լռիկ մնջիկ և առանց վկաներու եղաւ, մինչդեռ այս երկրորդը նոյն իսկ Աստուածութեան հրապարակական վկայութեամբը յայտնուեցաւ։ Այն ատեն Յովսէփ՝ որ անոր իսկական հայրը կը կարծուէր, ուղից պահուեալ և ինքզինքը ծածկել ու անձանթ մնալ. բայց այսօր Երկնաւոր Հայրը՝ զոր ոչ ոք կը կարծէ թէ իսկական հայրն ըլլայ, բացայայտ կերպով կը յայտնուի (Անդ)։ Ո՛վ փառք ուրեմն Տեառն Մերոյ, կ'աղաղակէ աստանօր Ս. Պետրոս Ոսկիաբան։ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ինքն ըսաւ. Որդիէն զստ մէկը չի ճանչնար զՀայրը. ուստի այս Միածին Որդին իր Աստուածային Հայրը աշխարհին ճանչցնելէն առաջ, ահաւասիկ նոյն ինքն Հայրը՝ անոր գլխուն վերեւ երկինքը բանալով՝ Հոգին Սուրբը անոր վրայ զրկելով՝ լուսով շրջապատած՝ յայտարար ձայնով՝ աշխարհի կը ճանչցնէ զայն իբրեւ իր միածին, ճշմարիտ և համագոյակից Որդին, ամենաստուգ, ամենազգալի, ամենափառաւոր և ամենափայլուն կերպով. և կը հուշակէ աշխարհիս վրայ խոնարհող այս Որդին իբրեւ ճշմարիտ Աստուած. որպէս զի մարդիկ անոր հաւատան երբ որ երկինքը թագաւորող Հօր Աստուծոյ մեծ վայելչութեան վրայ խօսի անոնց, եւ այսպէս պէտք էր որ ըլլար. վասն զի, Աստուածութիւնը՝ ինքն իրեն միայն ծանօթ

ըլլալով՝ չի կրնար ճանչցուիլ եթէ ինքզինքը չի ճանչցնէ, և ինքնիրեն վկայութիւն չընէ. և միայն Աստուածային Հայրը կրնար ճանչցնել իր Աստուածային Որդին. ինչպէս որ միմիայն Աստուածային Որդին ալ իր Աստուածային Հայրը կրնար յայտնել մեզի։

8. Արդ՝ բաւական չէր, կ'ըսէ այս մասին Ս. Կիպրիանոս, որ Յիսուս Քրիստոս Աստուած և աշխարհի Փրկիչ հուշակուած ըլլար մասնաւոր կերպով Հրեշտակէն՝ հովիւներուն, աստղին միջոցաւ՝ մոգերուն, Սիրմէն ծերունիէն՝ սակաւթիւ անձանց տաճարին մէջ, և Եղիսաբէթի անձուկ տան մէջ. հապա՛ պէտք էր որ նոյն իսկ իր Աստուածային Հօրմէն որ ինքզինքը կը ծածկէր բայց ձայնը լսելի կ'ընէր, աւելի հանդիսաւոր, աւելի վաւերական և աւելի փառաւոր վկայութիւնը ընդունէր իր Աստուածութեան։ Այսպէս՝ ամենակարող Աստուծոյ անձառելի ձայնովը, որ առաջին անգամ ականջներու կը հնչէ, բայց աւելի սրտերու խորը կը թափանցէ, աշխարհքի կը յայտնուի առանց առեղծուածներու, անստուեր, առանց օրինակի, հաւատքի այս մեծ և նոր ճշմարտութիւնը թէ՛ Յիսուս Քրիստոս որդի մարդոյ ճամբիս, համագոյակից եւ յաւիտեական որդի Աստուծոյ է (Յղգս. Մկրտ. Քրիստ. և Յայտ. Երրորդ)։ Եւ արդարեւ, կը յաւելու Ս. Ամբրոսիոս, այս հրաշքներու բազմութիւնը որով երկինքը կը բացուի, Ս. Հոգին զգալի կերպով Յիսուսի Քրիստոսի վրայ կ'իջնէ, Հայր Աստուած Որդւոյն կը խօսի, եւ աստուածային ձայնը՝ զԲանն Աստուածը կը յայտարարէ, միայն Մարդացեալ Աստուծոյ վայելչութեանը համար չի կատարուիր, այլ նաեւ մեր հաւատքին հաստատութեանն ու սիրտինսցը համար։ Քանզի, եթէ աստուածային գթութիւնը նպատակ չունենար այս հաստատութիւնն ու սիրտինքը մեր հաւատքին ընծայելու, որուն մեր հաւատքը պէտք ունէր, կրնային՝ Հայրն Աստուած ու Հոգին Սուրբ, Երրորդութեան անտեսանելի անձերը, խօսիլ և իջնալ տեսանելի կերպով մը Որդւոյն Աստուծոյ վրայ։

(Շարունակելի)

Թարգմ.

Մ. Վ. ՄԵԼՄՈՒՆԻ

ԵՕԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵՒ՝ ԳՐԲԷՆ

Ի. Բ. Ա. — Ի. Բ. — Ս. Հարց օրինակներուն վրայ:

(Շար.)

Ո՛հ, ո՛րչափ շատ ու ծանր նեղութիւններ կրեցիս
Առաքեալներ, մարտիրոսներ, խոստովանողներ, կուսակէս
եւ ամէկ անուն որ ուզեցիս Քրիստոսի հետեւումն ետեւ
ւնենալ:

Որովհետեւ իրենց անձը ասեցիս այս աշխարհիս
վրայ, որպէս զի զայն պահեն յաշխեմական կեանքի:

Ո՛հ, ո՛րքան խոստովանեալ եմ քեզ, ո՛րչափ երկայնասեւ
ու ծանր փորձութիւններ կրեցիս. ո՛րչափ յաճախ ասե-
ցուցան թշնամիքիս. ո՛րչափ անդադար ու եռանդուն
աղօթքներ մատուցեմ Աստուծոյ. ո՛րչափ խիստ պահեմ
պահեցիս. ո՛րչափ մեծ եռանդ ու փայլ ունեցան հո-
գեւորական յառաջադիմութեան. ո՛րչափ զօրաւոր պա-
ստաւով մեղեցիս մոլորութիւնները յաղթահարելու եւ նոս-
ճելու համար. ո՛րչափ մարտնչեմ ուղիղ դիտարկու-
թիւններ ունեցան առ Աստուծոյ:

Յերեկ կ'աշխատեիս ու գիշերը ընդ երկար կ'աղո-
թեիս. քակտեմ աշխատած ասեցիս այ ընտել չեմ
դադարեմ մատուցական աղօթքի:

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

(Շար. եւ վերջ)

Ոսկերեանի թշնամիները տեղեկանալով թէ ա-
նիկայ Կոկիտոնի մէջ հանգիստ է, զինքը նոյն տեղէն
հանելով, տանել տուին Արարիտն ամայի ամրոցը,
406ին: Սուրբ տանողները, զինքը չարչարելու հա-
մար ուղիղ ծախսներէ չէին քողեցներ, այլ լեռներու
եւ անտառներու մէջէն, եւ այն ձմեռ ժամանակ: Սուր-
բը հիւանդ եւ ուժասպառ վիճակի մէջ հասաւ վեր-
ջագէտ Արարիտն: Հոն գրեց նամակի ձեւով սքանչելի
գիրք մը սո վերնագրով իր անձին չվնասողին ոչ ոք
կրնայ վնասել: Ուրիշ շատ նամակներ ալ գրեց Պոլիս,
Հռոմ եւ այլ եւ այլ տեղերու առաջնորդներուն ուղ-
ղութով:

Բայց որովհետեւ Արարիտն ալ Սուրբը իր սքան-
չելի վարքովը եւ ճարտար լիցուովը ամենուն սիրելի
եւ պատկառելի հանդիսացաւ, իր թշնամիները դար-
ձեալ հրաման հանեցին որ Հայոց կողմերէն հեռացուի
եւ Պոնտոսի սահմանները աքսորուի մինչեւ Սեւ ծո-
վուն եզերքը Պիդիւլոն գիւղը: Սուրբը տանող զին-
ուորները անողորմաբար կը նեղէին զինքը, եւ կ'ըսէին
իրեն. Մեծ պարգեւներ պիտի առնունք եթէ ճամ-

բան մեռնիս: Ուստի ամբողջ երիք ամիս ասդին ան-
դին անկոխ, դժուարագնայի տեղեր պտտեցան զինքը:

Երբ որոշեալ տեղին մօտեցան, Ոսկերեան տկա-
րութենէն չկրցաւ առաջ ելնալ: Ուստի Կոմանոս որ
հասան, ուղեցին քիչ մը հանգչել եւ քաղքէն հինգ
վեց մղոն անդին Ս. Բասիլիսկոսի վկայարանին մէջ Ի-
ջեանեցան: Նոյն գիշերը Ս. Բասիլիսկոս Ոսկերեանի
երեւցաւ եւ ըսաւ. Զօրացի՛ր, բաջալեռու՛, եղբայր
Յովնանիս, որովհետեւ վաղը մէկեղ պիտի քրանք:
Երեւցած էր նոյնպէս վկայարանի քահանային եւ ը-
սած էր. Մեր Յովնանիս եղբոր սեղ պատրաստէ, որով-
հետեւ կու գայ:

Այս տեսիլքին վրայ Ոսկերեան շատ զօրացաւ
եւ միթմարուեցաւ: Յաջորդ օրը զինուորներուն աղաչեց
որ մինչեւ ժամը հինգ հոն կենան. բայց անոնք մտիկ
չըրին եւ զինքը առին գացին: Բայց քիչ մը երթալէ
յետոյ երբ տեսան թէ կը մեռնի, Սուրբին աղաչանքին
համեմատ զինքը նոյն վկայարանը դարձուցին եւ տե-
սան որ հաւատացելոց բազմութեամբ լեցուած էր:

Այն տեսն Սուրբը ծամբու զգեստը հանեց, աս-
նական զգեստները հագաւ եւ վկայարանին մէջ Ս.
Խորհուրդը ընդունեցաւ. վերջին աղօթքները ընելէ
յետոյ կրկնեց իր սովորական խօսքը. Փա՛նք Աստուծոյ
ամէն բանի համար. եւ Ամէն ըսելով զուարթութեամբ
աւանդեց հոգին: Տեղւոյն եպիսկոպոսը մեծ հան-
դէսով թաղեց Երանելոյն մարմինը Ս. Բասիլիսկոսի
գերեզմանին մօտ նոյն վկայարանին մէջ, 407 Սեպ-
տեմբեր 14ին:

Ոսկերեանի մեռնելէն վերջը խնոր սրբութեան
անունը աւելի տարածուեցաւ ամէն կողմ, ուստի շատ
եկեղեցիներու մէջ անիկա ոչ թէ իբրեւ ննջեցեալ ե-
պիսկոպոս մը կը յիշատակուէր, այլ իբրեւ սուրբ մը
կը տօնուէր:

Մարկեղիսոս կոմսը Ոսկերեանի տօնախմբութեան
հաստատութիւնը 428ին կը համարի, այսինքն անոր
նշխարաց փոխադրութենէն տասը տարի առաջ. սա-
կայն լինովկենափոս Հռոմայ քահանայապետը եւ Ս.
Օգոստինոս աւելի առաջ սուրբ անուանած էին Ոսկե-
րեանը:

Սուրբին նշխարները 438 Յունուար 27ին Պոլիս
փոխադրուեցան մեծ շքով եւ Առաքելոց տաճարին
մէջ ամփոփուեցան: Կրտսէի թէ քանի մը դար վերջը
Ս. Ոսկերեանի մարմինը Պոլսէն Հռոմ փոխադրուեւ է
եւ վատիկանի Ս. Պետրոս տիեզերահռչակ եկեղեցւոյն
մէջ ամփոփուեւ է: Ոսկերեանի աջ ձեռքին ընդմէջ ու-
ցուցածատուր վահանակին Ս. Զաքարիայի հոյակապ տա-
ճարին մէջ կը պահուին:

Վ Ե Ր Զ

ՍՈՒՐԲ ՍՐԲՏ ՅԻՍՈՒՍԻ(*)

Գլ. Ե. — Ս. Սրբի ջերմեռանդութեան օգուտները

Հ. Որո՞նք են այս ջերմեռանդութեան օգուտները :

Պ. Ան՝ հաղորդակից կ'ընէ զմեզ Տեառն մերոյ առ Երանուհի Մարգարիտա-Մարիամ ըրած փառաւոր խոստումներուն :

Հ. Ի՞նչ են այս խոստումները :

Պ. Ահա քանի մը հատը, որոնք համառօտութեամբ են աւանդական սա ձեւին մէջ. Ս. ՍՐՏԻՆ ՏԱՍԵՆԴԿՈՒ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ, ի նըպաստ անոնց որ իրենց վստահութիւնը կը դնեն անոր վրայ :

1. Անոնց պիտի տամ իրենց վիճակին հարկաւոր ամէն շնորհները :

2. Անոնց ընտանիքին մէջ պիտի հաստատեմ խաղաղութիւնը :

3. Զանոնք պիտի մխիթարեմ իրենց ամէն նեղութիւններուն մէջ :

4. Անոնց ապահով ապաստանը պիտի ըլլամ ի կեանս՝ մանաւանդ ի մահու :

5. Իրենց բոլոր ձեռնարկներուն վրայ ա-

(*) Տեա Առ. Գ. Տարի թիւ 424, էջ 731 :

ռատ առատ օրհնութիւններ պիտի սիրեմ :

6. Մեղաւորներն իմ սրտիս մէջ պիտի գտնեն պթութեան աղբիւրն ու անսահման ուրիշները :

7. Դազջ հոգիները եռանդուն պիտի դառնան :

8. Եռանդուն հոգիները պիտի թեւակոխեն մեծ կատարելութեան :

9. Պիտի օրհնեմ այն տունները որոնց մէջ իմ սրտիս պատկերը պիտի կախուի ու պիտի մեծարուի :

10. Քահանաներու պիտի շնորհեմ ամէնէն խստացած սրտերն անգամ չարժեղու հանձարը :

11. Այս ջերմեռանդութիւնը տարածող անձերուն անուանները պիտի ըլլան իմ սրտիս մէջ, որմէ կրթեք չպիտի ջնջուին :

12. Ամէն անոնց որ ինն ԱՆԳԱՄ ՅԱՋՈՐԴԱՅԱՐ Ս. Հաղորդութեան պիտի մերձենան ամսոյն առաջին ուրբաթ օրը, կը խոստանամ վերջնական ապաշխարութեան շնորհքը. անոնք բնաւ չպիտի մեռնին ինծի թշնամի, կամ գուրկ Ս. Խորհուրդներէ : Այն վերջին վայրկեանին իմ Սիրտս անոնց ապահով ապաստանարանը պիտի ըլլայ. (Վարք Եր. Մարգարիտայի) :

Ե Ս Թ Ե Ր(*)

(Շար.)

Բ. ԱՐԱՐ. Թ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

Այս տեսարանը կէս մը կ'առասանուի, կէս մը կ'եղովի

Էլիզ, Երգչախումբը
Էլիզ

Ձեզ ի՞նչպէս կ'երեւի, քոյրե՛ր, ներկայ վիճակնիս :

Եսթե՛ր թէ Համան պիտի լինի յաղթական :

Աստուծո՛յ թէ մարդոց

Գործերն ի գլուխ պիտի ելլեն :

Տեսաք ինչ անեղասաստ բարկութիւն

Կը բորբոքէր զայրացկոտ դէմքն արքային :

Օրիորդ մը

Աչքերուն փայլակներէն կը խողէին աչքերնիս :

(*) Տեա թիւ 426, էջ 812

Ուրիշ մը

Անոր ձայնը կարծեցի երկյաղըզորդ որոտում :

Ելիզ

Ի՞նչպէս այդ ցառումն ահեզ

Վայրկենաբար անհետ եղաւ :

Օրիորդ մը կ'երգէ

Մէկ րոպէ փոխարկեց այն բարկութիւնն անողոք .

Առիւծն ահեղագոյ գառնուկ մ'եղաւ հանդարտիկ ,

Մեր Տէրն անշուշտ իջուց անոր խիստ սրտին մէջ

Այդ հոգին հեզութեան :

Երգչախումբը կ'երգէ

Մեր Տէրն անշուշտ իջուց անոր խիստ սրտին մէջ

Այդ հոգին հեզութեան :

Նոյն օրիորդը կ'երգէ

Ինչպէս առուակ մը հեզիկ

Կ'անսայ ձեռքին , որ զինք հոս հոն կը դարձնէ .

Եւ թոյլ տալով որ իր ջուրերն օգտագործուին ,

Արգաւանդ կ'ընէ արտ մը բոլոր .

Ո՛վ Աստուած , մեր կամքին իշխան միահեծան ,

Այնպէս սիրտն արքայից է ձեռքիդ մէջ :

Ելիզ

Ահ , սրբան կը վախնամ չարագուշակ ամպերէն ,

Որ այս իշխանին աչքը մութով կը ծածկեն .

Իր զից պաշտամունքին ի՞նչ կուրօրէն յարած է :

Օրիորդ մը

Դժպէտի անուննին լոկ վկայութեան կը կոչէ :

Ուրիշ մը

Անշունչ աստղերու , արդուզարդին երկինքի ,

Պիղծ պաշտօն կը տանի :

Ուրիշ մը

Անոնց պատկերներով պալատն ամբողջ լեցուն է :

Երգչախումբը կ'երգէ

Եզկիլինե՛ր , կը լքանէք Տէրը մարգոց .

Եւ ձեր ձեռագործին կ'երկրպագէք :

Օրիորդ մը կ'երգէ

Ցրուէ՛ այդ ստուերն Աստուած Իսրայէլի

Ե՛րբ սուրբերուդ արցունքն ըղբեզ պիտի չարժէ .

Այն քօղը ե՛րբ պիտի վերնայ

Որ սեւ գիշերով աշխարհ բոլոր կը պարուրէ՝
Յրուէ՛ ալդ ստուերն Աստուած Իսրայէլի,
Յե՛րբ ծածկուած պիտի մնաս :

Ամենեւն դեռա՛սի օրիորդ մը

Աւելի ցած ձայնով խօսինք : Տէ՛ր , եթէ չար հեթանոսք
Մեր խօսքերը լըսելով երթան մատնեն զամէնքնիս . . .

Ելիզ

Ի՛նչ , զաւակ Աբրահամու , երկիւղ մը վատ մահացու
Կ'երեւի թէ զքեզ արդէն կը դեղեւէ .
Է՛հ , թէ Համանն ամբարտաւան իր մարդասպան ձեռքին մէջ
Դաշոյն մը սպառնալից շողացնելով աչքերուդ՝
Ուզէ՛ր բռնադատել բերանդ անգօր
Որ հայհոյես անունն էին ամենակալ . . .

Ուրիշ օրիորդ մը

Բարկութենէն մըռնչելով թերեւս արքան Արտաշէս
Թէ ծնրադիր չը խոնարհինք
Անլեզու կուռքի մ'առջեւ
Հրամայէ զոհել զմեզ .
Ո՛րը , քո՛յր իմ , արդեօք կ'ընտրես :

Դեռա՛սի օրիորդը

Ես կրնամ դրժել Տիրոջ զոր կը սիրեմ ,
Պաշտել Աստուած մը զուրկ ուժէ , լաւութենէ ,
Մնացորդ կոճղի մը հողմաբեկ ,
Որ ինք զինք չի՛ կրնար փրկել :

Երգչախումբը կ'երգէ

Անգօր , խո՛ւլ աստուածներ , անոնք որ ձեզ կը զիմեն
Անլըսելի պիտի մընան :
Սատանաներն և իրենց պաշտօնատարք
Յաւիտեան ամօթահար չըքանան :

Օրիորդ մը կ'երգէ

Սիրտըս , լեզուս և էութիւնս ամբողջովին
Կենսատու Աստուծոյս ընծայեն թող մեծարանք :
Զարհուրանքի , վշտերու մէջ ,
Կ'ապաւինի հոգիս անոր բարութեան .
Կ'ուզէ՞ որ մեռնիմ իր մեծագոյն փառքին համար .
Սիրտըս , լեզուս և էութիւնս ամբողջովին ,
Կենսատու Աստուծոյս ընծայեն թող մեծարանք :

Ելիզ

Երբեք չեմ հիացած ամբարշտին փառքին վրայ :

Ուրիշ օրիորդ մը

Չարին երջանկութեան թող ուրիշներ նախանձին :

Ելիզ

Անոր օրերն սքանչելի կ'երեւին,
Ոսկին անոր լաթին վըրայ կը շողջողայ,
Անոր հրփարտութեան, հարստութեան սահման չը կայ,
Օղին հանգիստն երբեք անոր հեծութենէն չէ խռովեր .
Կը ննջէ, կ'արթննայ նըւագնիւրու ձայներով .
Սիրան հեշտութեան մէջ կը լողայ :

Ուրիշ օրիորդ մը

Ի լըրումն յաջողութեան,
Իրեն սեւուղին մէջ վերապրելու յոյս ունի .
Եւ սեղանին բոլորն առած խումբը ժպտուն զաւակաց
Կարծես կ'ըմպէ լիարաժակ ուրախութիւնն իրեն հետ :

(Շարունակելի)

ԳԱԹՕԼԻԲ ՄԷՉԶԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԻ (*)

(Տեվամի)

Իֆրեհի հագիգաթ

Այլանըն մախլուզը օլան ինսան սահիպի
խարաք, հիւրը, բուհանի վէ էօլիւմսիւզ պիր
ճանա մալիք տիր :

Ինսան ճիսմ ու ճանտան միւրէքքէպ,
Փարզ ու թէմիւզ սահիպի (raisonable) պիր
մախլուզ տոր :

Ինսանըն պիր մախլուզ տէնիլմէսինին սէ-
պէպի, Այլանըն գուտրէթիլէ եօլտան վար
օլմուշ օլմասը իչուն տոր : Օ՝ Ֆարզ ու քեմ-
եիզ սահիպի պիր մախլուզ տոր, եանի ան-
լայըն վար, էյիյի ֆէնատան, սօղբուլը եան-
լըտան, հագդը նահագվլըզտան թէֆրիք ի-
տէպիլմէք իսթիտատընը հայիզ տիր : Ինսանը
հայվանաթտան վէ շու կէօրիւնէն տիւնեա-
նըն քեաֆֆէի մախլուզաթընտան թէֆրիք
խտէն օնուն ազլը տոր :

Ինսան քեմ ու ճանսան քեքեֆիլ իթմիշ
սիր : Թեմ, կէօրաթիլմէպ, թէմաստա պու-
լունտըլըմը խարիճի մահֆազա, ճիսմի մատ-
տի տիր քի ազալարըմը վէ օրկանլարըմը-

տան իպարէթ պուլընան ագսամը հավի տիր :
Ճան իսէ . պիզտէքի օ եաւայան, հիսս իսեմ,
սիւեիւնեմ, մուհաֆեմէ էյլէյէն, քեագգուլ ի-
տէն, հարէքէթինտէ մուխքար օլան վէ ճիս-
մէ մէվճուտիյէթ, հարէքէթ վէ հայաթ վէ-
րէն մասսիի դայրը մէրիյէ (substance invi-
sible) տիր :

Ճիսմ իլէ ճանըն պիրլեմեսի սայէսինտէ
տիր քի ինսան, սատէճէ բուհ օլան մէլէք-
լէրաէն վէ զէքեա ու հայաթտան մահրում
պուլընան մատտիյաթտան ֆարզլը պիր մախ-
լուզ օլուր :

Պինաէն ալէյի ինսանըն ճանը վէ թէնի
պիրպիրինտէն ֆարզլը պիրէր վարլըզ տըր-
լար վէ պունլարըն էսատի, ճէվհէրի վէ շախ-
սի իթթիհատըլա ինսան հասըլ օլուր : Պու
իքի վարլըզլարըն եէկտիկէրինտէն ֆարզլը
օլաուգլարընը գիյրաէ իսպաթ իաէճէյիզ :

— Պիզիմ պիր ճանընը վար օլսուղը սա-
հիֆ մի սիր :

— Էվվէթ, պիզիմ պիր ճանըմը վար
օլաուզը զայէթ սահիհ տիր, չիւնքի պիզտէ
եաւայան վէ ազալարըմը հարաֆէք վեհեմ
պիր շէյ, հիսս իտէն, քանըեան, սիւեիւնեմ,
քեագգուլ էյլէյէն վէ հիւր օլաուզ հարաքէթ
իտէն պիր շէյ վար տոր : Հալպու քի թէն

(*) Տեւ Արծ. Գ. Տարի Թիւ 422, էջ 750.

քէնտիւյնստէն մուտք թալ սոր, հայաթտան մահրում սոր, հիսս իտէմէղ, սնոյաթմազ վէ իրատէթտէն պի պէհրէ տիր, պիրնաաչ սոր: Էօլլէ իսէ պիզտէ թէնտէն ֆորպլր օլտն պիր շէյ վար սոր քի, օ շէյ տէ ճանրմըդ սոր, բուհըմըդ սոր:

Ճան տէմէքէ շու կէօրալիւմիւզ պէմտէքի շէպաթ, հայվան վէ ինսան կիպի մէվճուտաթա հայաթ վէրէն իւսսի հայաթի (principe vital) սնոյաթլր: Փագաթ մատամ քի ինսանըն ճանր, ապիր էսաար հայաթիյէն նիհայէթտիզ սուրէթտէ ֆայիզ տիր, իշթէ պու սէպէպտէն իսանը նասաա նան թապիրնտէն ինսան բուհը սնոյաթլր:

Պիզտ պիր բուհըմըդ վար սոր: Հէր սէմէրէնին, հէր էսէրին սիր սէպէպի օլմագ իճապ իթտիյնտէն, մատամ քի պիզ պիր զի հայաթ մախլուգըդ, պիհաէն ալէյհ, պիր իւսսի հայաթիյէ մալիք օլմագլրըմըդ լագրմ կէլիր, եօգսա մատտէ հայաթտան մահրում սոր:

Պիզտ պաշլրճա իւշ մէլէքէ մէվճուտ սոր քի, պուհլար պիզտէ պիր բուհ վար օլտուզընա պիրէր տէլիլ տիրէր:

1. Պիզ հասսատիյէրիէ միւճէհէգիզ, Հալ պու քի պիր նաաչա թէմաա իաինիզ, հիշ պիր շէյ հիսս իթմէղ, Սէպէպի... Զիւնքի բուհ օնր թէրք իթմիշ տիր:

2. Պիզ իսրուա մալիքիզ, Տիւ շիւհիւր վէ թէֆէքթիւր իտէպիլիրիզ, հալպու քի ֆիքիր տէնիլէն շէյ սասէ տիր, կէօրիւնմէզ, ֆիքիրտէն պահա իթտիյնիզ վագըթ՝ ուզոն հախօա գալըն ֆիքիր տէմէք, միւտէվիէր հախօա միւրէպպա, եշիլ վէ հա գրմըզը ֆիքիր տէմէք ապէս տիր... Եու հալտէ ֆիքիր հէր մատտէտէ օլտուզը կիպի, ագսամը հալի պուլընան պիր էսաա էսէրի օլմազ: Պիհաէն ալէյհ, պիզտէ թէնիմիզտէն ֆարգլր սասէ վէ ֆիքիր կիպի կէօրիւնմէզ պիր բուհ վար օլտուզընը գապուլ իթմէլիյիզ:

3. Պիզ պիր ֆաալ իրասէքէ մալիքիզ, հալպու քի մատտէնին հատար զաթընաա հիշ պիր հարաքէթի վէ ամլիլի եօգ տլր, վէ ճիւմիմիզ արզումըզա կէօրէ հարաքէթ էսէպիլիօրա, օ տա, քէնտիւնի իհա իաէն պիր բուհըն իզթիտարընա թապի պուլընմաընտան սոր:

ԻԼԱՎԷ: Քիւշիւ պիր ֆիլսէֆէ սէրսի:—

Ինսանը էյիճէ թանրեապիլմէք իւն օնր իհաթա իտէն վէ օնա խըամէթ էյլէյէն մէվճուտաթը թանրմազ տա էյի տիր:

Կէօրալիւմիւզ շու ալէմի մէրիտէ իւշ նէվ զի հայաթ մախլուզ վար սոր: Նեպաթաթ, հալվանաթ վէ ինսան:

1. Նէպաթաթտա էսաար հայաթիյէ (principe vital), 2. Հայաթաթտա բուհը հասսաա (âme sensitive), 3. Ինսանտա (âme intelligente) մէվճուտ սոր:

1. Նեպաթաթաթի էսաար հայաթիյէ: Հայաթը նէպաթիլէնին իւշ վագիֆէսի վար սոր, 1. Նէպաթ թէլաաաա իտէր, 2. Պէօյիւր վէ նէմա պուլըր, 3. Եալըր, եանի քէնտիւնէ միւշապիլս պիր նէպաթ հաաալա կէթիլիր:

Սըրֆ մատտէտէ հայաթ օլմաաղընտան նէպաթա պիր էսաար հայաթիյէ իզթիզա իտէր: Նէպաթաթի պու էսաար հայաթիյէնին մահիյէթի նէ տիր: Հասսէլէրիմիզ օնրն ֆարգընտան աճիզ տիր, եալընըդ ագլըմըզ օնուն իրալէ էյլէտիյի աճալէ նագարէն մահիյէթի էսաթիյէսին թաեին իտէպիլիր:

Նէպաթաթըն պու էսաար հայաթիյէսի, սորֆ մատտէ իլէ պէրապէր պուլընտըզը հասէպիյէ զալըր միւրէմմէլ պիր տէրէճէտէ իտէ տէ, եինէ տէ սասէ տիր, զալըր մասի տիր: Ուզվիլիլին բապիլի վէ քիմիլի գուվիլիլիլին սէ ֆարգլր սոր: Զիւնքի քիմիա իլէ զի հայաթ պիր վիճուա, ուզվիլիլիլէ մալիք պիր վարըզ հուտուա կէթիլիլէմէզ:

Նէպաթըն էսաար հայաթիյէսի թօխում վտարթաաղըն հուտուա կէլիր, անճագ ուզվիլիլիլէ մալիք պիր ճիւմ իշիտէ իշլէր վէ նէպաթըն էօլիւմիլլէ նիհան օլուր:

Պիզ, Խրիսթիյանլար, պու հայաթը էսասիյէնին, քի բրէի արզըն զի հայաթ մախլուգաթընա հէմճիւնսլէրին հուտուա կէթիրէպիլմէք իզթիտարընա պէրապէր հայաթ պախշ էլլէմիշ օլտն ճէնապր Հագգըն քէլամընտան նշէթ իթտիյնի պիլիլիլիլ: Եւ սապ Ասուա, բիլսեցէ եկիր գբանգս խոսոյ, սերմանել սերմն բս ազգի եւ բս նմանութան. եւ ծառ պղպեթ առնել պսուղ բս ազգի իւրում, որոյ սերմն իւր ի նմին,

բաժնի և անհատական ի վերայ երկրի: Եւ եղել այնպէս (Մինդ. Ա. 11):

2. Հայվանաբերն ճանր: Հայվանաւ տէ- պաթընքինտէն երեքտէք պիր հայաթ մէվ- ճուաւ տըր: Օ՝ աշնի զէմանաւ հէմ հայաթը նեպաթիյէյէ վէ հէմ տէ հայաթը հիսսիյէյէ մայիք տիր: Օնուն՝ նէպաթընքինտէն տաճա զիյաւտէ իւսթիւն վէ գուվվէթիյի օլտն ճանը ալթը Ֆիիլ հուսուլա կէթիւրիւ, հանի հայա- թը նէպաթիյէյէն իւլ վապիֆէթինտէն պաշ- գաւ, հայաթը հիսսիյէյէն իւլ նէվ ֆիւլլէրի- նի տէ իրայէ իտէր: Հապիյաթէն տէ հայ- վանաթաւ, նէպաթաթաւ մէշուտըմը օլ- մայան իւլ հալ կէօրիւրիւ: 1. Հիսս: Հայ- վան՝ թանրը, սօղուգ վէ սըճաղը ֆարգ ի- տէր, մահգուգիյէթ վէ եա աճը տուլար: 2. Իսթիյաթի հաւաթէր: Հայվան պիր մահալտէն օ պիրինէ հարաքէթ իտէր: 3. Գուվվէյի քաղ- փիւրիյէ վէ սեվգի քալիի: քի պուշլար հայ- վանաթաւ քէնաթիւրէ ֆայիաթլի օլտն շէյի ինթիւրալա վէ զարարը օլապիլէճէք շէյլէր- տէն իճթիյալա պիր իպթիաթը վէրիւրէր: (Կալաշի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՒԼԻԿԵՒ ԱՇԽԱՐՀ. — Ամանորի տա թիւ Ս. Քա հանապետին իրենց շնորհաւորու- թիւնները ուղղած են Նոյնի վեհափառութիւնը:

Փրանկիստ Թովսէֆ Կոյսըլա տգաւոր Աւստրիոյ- Հունգարիոյ,

Գուրիէյմս Բ. Կոյսը Գերմանիոյ,
Նիքոլա Բ. Կոյսը Ռուսիոյ,
Փրեա. Աւգ. Գ. Թագաւոր Սաքսոնիոյ,
Ալփրանտ ԺԳ. Թագաւոր Սպանիոյ,
Կուսթաֆ Է. Թագաւոր Դանիա,
Հաղան Է. Թագաւոր Նորվիգիոյ,
Ալպէրդուս Ա. Թագաւոր Բիզգիոյ,
Նիքոլա Ա. Թագաւոր Մոնթէնէկոյի,
Լուի Գ. Թագաւոր Պալմէրայի,
Մանուէլ Բ. Թագաւոր Փորթուգալի,
Մարիամ Բրիթանիան և Աւելիա Թագաւորները և բազմաթիւ իշխաններ, գուքսեր և կոմսեր:

Ն. Ս. Հայր գովասանական նամակով մէ շքեղ լանջախաչ մը քննադէպ պետական քարտուղար Վ. Ս. Մէրի տէր Վալ Կարգինային, աւթիւ Ն. Վ. Տէրութեան քահանայական յորդանանին,

Նոյն գուքսեղ Կարգ. Ռամբոլայի տեղ Սուրբ- Ժողովին քարտուղար անուանուեցաւ Վսեմաշուք Տէրրադա Կարգինայը:

Մալթայի Կարգին ընդհ. Մեծաւոր անուանուե- ցաւ Վսեմաշուք Պիպէթի Կարգինայը, հանգուցեղ Ռամբոլայի տեղ:

Վ. Վ. Պիպէ և Լուկարի Կարգինայերը Սուրբ- Ժողովին անգամ անուանուեցան:

Սուրբ-Ժողովը եկեղեցւոյ վարչութեան ամենա- կարեւոր տաեաններէն մին է. անոր միայն անկէ բ- ճիւ. տայ հետեւիկոտութեան և ներքուլթեան վար- զապետական և գործնական խնդիրներու մասին:

Ն. Լանտնէն յոր կը արուի թէ Անկիգան եկե- ղեպին ճգնաժամ մը կ'անցնէ եպիսկոպոսներու միջեւ տեղի ունեցող կախնեքուն հետեւանքով: Անկիգա- նութեան երկու մեծ հատուածները, բարձր եկեղեցին որ կ'ալմոյկեկեթեան միտեայ է, և խմարճ եկեղե- ցին որ կ'ալմոյկեկեթեան հակեայ է, իրարու հեռ- բուռն պայքար մը կը մղեն և կ'սպառնան իրապա- իրիկ իրենց յարաբերութիւնները և վերջ տայ Անկի- գանութեան:

ՀԱՅ-Կ ԹՈՂԻԿԵՒ ՊԱՏՐԻԱՐԿ ԻՐԱՆ. — Ն. Ա. Մե- նագատուութիւնը Պօղոս Պետրոս ԺԳ. Պատրիարք Տանն Կիլիկիոյ Ս. Մննդեան և ամանորի աւթիւ Ս. Քահանայապետին ուղղած շնորհաւորական գրին հե- տեւեալ պատասխանը ընդունեցաւ Վսեմ Մէրի տէր Վալ Կարգինայէն:

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՏՈՒՀԱՐԻԹԻՆ

Ն. Սրբութեան

Թիւ 68,453

Վաշիկան, 8 Յնւ. 1914

Ամենապատիւ Տէր

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ

Հ. Ն. Պատրիարք Կիլիկիոյ

Կ. Պոլիս

Ամենապատիւ Տէր,

Յօժարութեամբ յանձնեցի Ս. Հոր օգոստոսիաւ- ձեարք՝ այն պատուական գրութիւնը, որով Ձեր Ամե- նագատուութիւնը Անոր Կ'արտայայտէր յարգանքի տղիւ զգացումներ և սիրայիր բարեմաղթութիւն. ներքին արեւն ան աւթիւ Ս. Մննդեան և Ամանորի:

Ն. Սրբութիւնը մեծ հաճութեամբ ընդունեցաւ ջերմ յարգանքի հաւատարմքը Ձեր մենագատուա- թեան, և ի փոխարէն այդ տեղ իր բարձր գիտաւորու- թեանց համար մատուցուած ազգութիւններուն, հրաւի- բեց Ձեր մենագատուութեան և ի. պատարքութե- թեան Երգիկոպոսներուն, քահանաներուն և հաւա- քայիններուն վրայ իսկապէս քրիստոնէական կեանքի մը կարեւոր երկնային ամէնէն բնութիւն շնորհները և տուաւ ամէնուն խնդրուած առաքելական օրհնու- թիւնը:

Այս աւթիւ Ձեր ինծի ուղղած սիրայիր բարե- մաղթութիւններուն համար շնորհակալութիւն յայա- նելով կ'ընծայեմ Ձեզի համարման անկեղծ հաւատ- տիքը և եմ

Ամենապատիւ Տէրութեանց

Ծառայ

Ռ. ԿԱՐԳ. ՄԷՐԻ ՏԷՐ ՎԱՆ

... Վաղը, Յունուար 18ին, Ս. Աստուածածին Աթոռանիստ Եկեղեցւոյ մէջ պատարագ պիտի մատուցուի և հանգստեան պաշտօն պիտի կատարուի հանգուցեալ Հասուն Կարդինալին հոգւոյն համար:

... Ամենապատիւ Հոգեւոր Տէրը մասնաւոր շնորհաբերականով ծանոյց Զմատեան Միաբանութեան Արհի. Արհի. և Գեր. Գեր. Սնդամներուն որ նոյն Միաբանութեան անդրանիկ ընդհ. Ժողովը, նոր կանոնադրին տրամադրութեանց համեմատ, պիտի գումարուի Զմատ. վանքին մէջ, առաջիկայ մայիս 40ին, նոր պաշտօնեաներու ընտրութեանց համար:

«Կ. Արձագանգ» այժմէն կը մազթէ եռանդազին որ այդ ընտրութիւնները յաջողութեամբ կատարուելով Զմատեան արդիւնաշատ Միաբանութեան նոր, յարաճուն կենսունակութեան սկիզբը բլլան:

... Վերջերս շքեղ հանդէսներով կատարուեցաւ Ֆանարաքիի կղերանոցին մէջ Վեր. Հայր Ժիւլի քահանայական արծաթի յարեաներ:

... Ս. Երրորդ սթիւն եկեղեցւոյն մէջ Յունուար 16ին սկսան Ս. Սրտի ընկերութեան աղօթքները, Յունուար 25ին, ընկերութեան անդամներուն համար ձայնաւոր պատարագ պիտի մատուցուի նոյն եկեղեցւոյն մէջ:

... Արհի. Ստեփան Եպիսկոպոս Իսրայէլեան վիճակաւոր Խորբերդի Ամն. Հոգեւոր Տէրով կը գրէ հետեւեալը.

Մ. Ազիզ, 23 Դեկտ 1913

Ամեն. եւ Դերեցանիկ Հոգեւոր Տէր

Հոս աւիաներով առաջ աշխարհական Ժողով կազմողներէն երրորդ մըն ալ յետ կոչում ըրած է, զոր կը ծրարեմ հոս Նա լատինաձէս կարծուած բլլալով, Միկազեառաց Առաք. Նուիրալին տուած է Ֆրանսերէն լեզուաւ իւր յետ կոչման թուղթը, Վսեմ. Կարդինալ Կոթի իմ խորանառաց վրայ պահանջած էր Megr. Drureէն այդ թուղթը և վերջերս ինչ առաքած էր, զոր տհա կ'ուղղեմ Ձեր Դերեքլանիկ Տէրութեան, խնդրելով որ հաճիք հրաման ընել հրատարակելու համար «Կոթի» Արձագանգ»ին մէջ Հայերէն թարգմանութեամբ հանդերձ: Այսքան ու-

շանալուն պատճառը հետեւեալն է. Կարդինալը Օգոստոս ամսոյն մէջ ղրկած է եղեր այդ թուղթը, բայց առանց իմ ձեռքս հասնելու, կորսուած է եղեր այդ նամակն շնորհիւ կանոնաւորութեան մեր սուրհանդակներու ուստի կրկին անգամ ղրկած է վերջերս...

ՅԵՏՍԿՈՉՈՒՄ ԲԺԻՇԿ ՏՐ. ՆՇԱՆ ՆԱՏԻԿԵԱՆԻ

Je soussigné, Docteur Nishan Nahighian regrette l'adhésion que j'ai donnée par écrit au comité national des Arméniens de Constantinople, comité interdit par N. S. Père le Pape; et si dans notre lettre il y a eu quelque chose contre l'autorité ecclésiastique, je le retire également.

Dr. Nishan Nahighian

Mamouret-ul-Aziz, le 16 Juin 1913

Յար եւ նման է բնագրին,

Վիճակաւոր Խորբերդի

Խորբերդ + ՍՏԵՓԱՆ ԵՊՍ. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ 22 Դեկտ. 1913

Թարգմանութիւն յեւսկոյսման.

Ստորագրեալս, Տգր. Նիշան Նահիկեան, կը ցաւիմ հաւանագիր տալուս համար կոստանդնուպոլսյ Հայերուն Ազգ. Ժողովին, զոր մեր Սրբազան Հայրը. Քահանայապետը արգելած է. և նոյնպէս յետս կը կոչեմ եթէ երբեք եկեղեցական իշխանութեան գէտ բան մը կը գանուի մեր գրին մէջ:

Մ. Ազիզ, ՏՕԶԴ. ՆԻՇԱՆ ՆԱՏԻԿԵԱՆ 16 Յունիս 1913

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Նորենար Պատերազմական նախարար Էնվեր փաշա հանգստեան կոչեց 180է աւելի սպաներ:

... Արեւելեան նահանգներու բարենորոգմանց մասին եղած բանակցութիւնները լաւ ճամբու մէջ են. կը յուսացուի որ քիչ առնեն գոհացուցիչ արդիւնքի մը պիտի յանգին:

... Ալպանիոյ վիճակը տակաւ տաղնապալի հանգամանք մը կ'առնուի. կը հաւատուի թէ նախորդ Պատերազմ. նախարար Իզզէթ փաշայի առաջարկուեր է որ ընդունի Ալպանիոյ գահին ընտրելութիւնը, բայց ան մերժեւ է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	33
Եազրգ չօնուզարբրգա	35
Կոստանդնուս յոբելեանը յԱմասիա	37
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Մկրտութիւնը	38
Եօթնեակ Քրիստոսի	41
Սուր Սիրս Յիսուսի	42
Եսթեր	42
Գաթլիք Մէգնէլի Էսասլար	45
Տեղեկագրական	47

ԱՐՏՕՆԱՏԵՐ



ՏՆՕՐԷՆ-ՆՄԱԿՐԱՊԵՏ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Շարքաթերքի, Բաք. Պաշտակ վոդո օն 5. Կ. Պոլս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20. — մէկ թիւ՝ 1 դհկ. — Արշաւան-
ման տար. ֆր. 10. վեցամս. 5. — Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ. — Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople.

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու եւ
յօդուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր խնկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4. — Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5. — Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Գրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէսներ,
մահազդներ, եւն. եւն.: Գիները անմեղելի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE: I. Schottenring

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Brunn, Budapest, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegenndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwettau.

SUCCURSALES EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Péra et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Escompte d'effets de commerce.

Emission de chèques, et de lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Ouverture de Comptes-Courants, ainsi que d'accréditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse.

Garde de valeurs publiques etc. etc.

Caisse d'Epargne.

Locations de coffre-fort.